## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՈՒԿԱՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

09.10.2013թվականի համար 16-Ն
գ. Դուկասավան

## 2013թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է.

2013թ.-ի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2013թ.-ի վարչական բյուջեի եկամուտներն ավելացնել 155.0 հազար դրամով, այդ թվում՝

ա. 140.0հազար դրամ որպես բնական գազի և էլեկտրաէներգիայի թանկացման համար կառավարության կողմից հաստատված սուբվենցիա,

բ. 7.0 հազար դրամ որպես ինքնակամ կառույցի (շենք.շինության) օրինականացման համար վարչական գանձում:

գ. 8.0 հազար դրամ վարչական գանձում աճուրդի մասնակցության համար:

2) Ավելացրած 155.0 հազար դրամի չափով ավելացնել նաև վարչական բյուջեի ծախսային մասը՝

ա. 06.4.1 փողոցների լուսավորության նախահաշվի 4212 էներգետիկ ծառայությունների հոդվածին ավելացնել 155.0 հազար դրամ,

բ. 1.1.1 օրենսդիր և գործադիր մարմինների նախահաշվի 4241- մասնագիտական ծառայությունների հոդվածից պակասեցնել 100.0 հազար դրամ

գ. 4232 – համակարգչային ծառայությունների հոդվածից պակասեցնել 30.0 հազար դրամ:

դ. Ընդամենը պակասեցված 130.0 հազար դրամ գումարն ավելացնել՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 1.6.1 նախահաշվի 4267 կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին:

3)9.2.2 կրթության այլ դասի չպատկանող նախահաշվի 4819 նվիրատվություն այլ շահ չհետապնդող կազմակ. հոդվածը պակասեցնել 200.0 հազար դրամով և ավելացնել նույն նախահաշվի 4729 այլ նպաստներ բյուջեից հոդվածին:

4)Ֆոնդային բյուջեի հողի իրացումից մուտքեր եկամտատեսակին ավելացրած 1724.0 հազար դրամ: Նույն չափով ավելացնել 04.2.4 ոռոգում նախահաշվի 5112 շենք շինությունների կառուցում հոդվածին:

Ավագանի՝

կողմ (7) դեմ(0) ձեռնպահ(0)

Ալբերտ Մովսիսյան
Խաժակն Սարգսյան
Ավետիք Մարկոսյան
Աբրահամ Համբարձումյան
Գոգո Թամոյան
Յուրիկ Մելքոնյան
Ա.Սարգսյան

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ Ժ.Պ՝ Ա. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

09. 10. 2013թ.
գ. Ղուկասավան